

ՄԱՍ 2. ՀԱՅԱՍՏԱՆ. ՏՆԱՅԻՆ  
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԵԿԱՍՈՒՏՆԵՐԸ, ԾԱԽՍԵՐԸ ԵՎ  
ՀԻՄՆԱԿԱՆ ՍՆՆԴԱՍԹԵՐՔԻ  
ՄՊԱՌՈՒՄԸ

## **Գլուխ 6. Տնային տնտեսությունների եկամուտները՝, ծախսերը և հիմնական սննդամթերքի սպառումը**

Սույն բաժնում ներկայացված է տնային տնտեսությունների եկամուտների, ծախսերի և հիմնական սննդամթերքի սպառման դինամիկան 2004-2014թթ.-ի ընթացքում: Ներկայացվող վերլուծությունը հիմնված է տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների արդյունքների վրա: Տեղեկատվության աղբյուրն է՝ ընթացիկ ծախսերի, սպառման և եկամուտների օրագիրը: Այս գլխում ներկայացված տնային տնտեսությունների կենսապայմանների բոլոր ցուցանիշները գնահատվել են ըստ մեկ շնչի հաշվով կատարված հաշվարկների:

### **6.1. Տնային տնտեսությունների տնօրինվող եկամուտները**

Տնային տնտեսության եկամուտը հանդիսանում է բնակչության կենսամակարդակը գնահատող կարևորագույն ցուցանիշներից մեկը:

Տնային տնտեսության ամբողջական եկամուտների ներքո հասկացվում են դրամական և ոչ դրամական եկամուտները:

Տնային տնտեսության դրամական եկամուտներն իրենց մեջ ներառում են՝ տնային տնտեսության անդամների կողմից իբրև աշխատանքի վարձատրություն ստացված գումարները (չեն հաշվառվում եկամտահարկը և աշխատավարձից այլ պարտադիր սոցիալական վճարումները), ինքնագբաղվածության արդյունքում կամ ձեռնարկատիրական գործունեությունից ստացված գումարները, սոցիալական տրանսֆերտները (կենսաթոշակները, դրամական սոցիալական աջակցությունը, ներառյալ գործազրկության նպաստը, ընտանեկան նպաստը, երեխայի ծննդյան և խնամքի նպաստները և այլ նպաստներ), մասնավոր տրանսֆերտները, վարձակալության տրված սեփականության դիմաց վարձավճարները, տոկոսավճարները, դիվիդենդները, շահաբաժինները, բաժնետոմսերի և այլ արժեթղթերի վաճառքից ստացված գումարները, անշարժ գույքի և տան ունեցվածքի, գյուղատնտեսական կենդանիների, սեփական տնտեսությունից ստացված մթերքի վաճառքի գումարները, կրթաթոշակների, ինչպես նաև բարեկամների և այլ անձանց կողմից տրամադրված օժանդակության կամ այլ դրամական եկամուտների տեսքով ստացված գումարները:

Տնային տնտեսության ամբողջական եկամուտը կազմված է դրամական եկամուտների բոլոր հոդվածներից և այնպիսի ոչ դրամական եկամուտներից, ինչպիսիք են՝ տնային տնտեսության կողմից սպառվող (օգտագործվող), սեփական տնտեսությունից ստացված սննդամթերքը՝ դրամով արտահայտված, ինչպես նաև բարեկամներից կամ այլ անձանցից անվճար ստացված ոչ պարենային ապրանքները և ծառայությունները:

Տնային տնտեսության մեկ շնչի հաշվով դրամական անվանական եկամուտների չափն ու կառուցվածքը 2008-2009թթ. և 2013-2014թթ. ժամանակահատվածների համար բերված է Աղյուսակ 6.1-ում:

\* Եկամուտների վերաբերյալ բացարձակ ցուցանիշները պակաս վստահելի են, քանի որ եկամուտները հաճախ թաքցվում կամ ավելի պակաս են նշվում հարցվողների կողմից (եկամուտները չբացահայտելու հակվածության էֆեկտը), ինչպես նաև, եկամուտների որոշ տեսակների բնորոշ է խիստ ընդգծված սեզոնայնությունը:

**Աղյուսակ 6.1. Հայաստան. Տնային տնտեսությունների անվանական եկամուտների տեսակները, 2008-2009, 2013-2014թթ.**

	Տնային տնտեսության մեկ շնչի հաշվով, միջին ամսական							
	Դրամ				%			
	2008թ.	2009թ.	2013թ.	2014թ.	2008թ.	2009թ.	2013թ.	2014թ.
<b>1. Դրամական եկամուտներ</b>	26 866	28 038	42 404	49 535	90.8	91.8	93.1	94.1
այդ թվում՝	14 491	15 328	21 869	25 231	49.0	50.2	48.0	47.9
• վարձու աշխատանք								
• ինքնազբաղվածություն	2 385	1 534	3 429	4 870	8.1	5.0	7.5	9.3
• գյուղմթերքի և կենդանիների վաճառք	1 771	1 667	2 441	2 648	6.0	5.5	5.4	5.0
• սեփականություն (վարձակալության վճարներ, տոկոսավճարներ, շահաբաժիններ)	35	25	177	195	0.1	0.1	0.4	0.4
• պետական թոշակներ և նպաստներ	4 870	5 615	7 576	8 308	16.5	18.4	16.6	15.8
• տրանսֆերտներ	2 692	2 669	4 778	6 126	9.1	8.7	10.5	11.6
դրանցից՝	449	354	560	666	1.5	1.2	1.2	1.3
- Հայաստանում ապրող բարեկամներից								
- Հայաստանից դուրս ապրող	2 243	2 315	4 218	5 452	7.6	7.5	9.3	10.4
• այլ եկամուտներ	622	1 200	2 134	2 157	2.0	3.9	4.7	4.1
<b>2. Ոչ դրամական եկամուտներ</b>	2 710	2 503	3 126	3 088	9.2	8.2	6.9	5.9
այդ թվում՝	2 426	2 230	2 873	2 804	8.2	7.3	6.3	5.3
• սննդամթերքի սպառում սեփական տնտեսությունից								
• անվճար ոչ պարենային ապրանքներ և ծառայություններ	284	273	253	284	1.0	0.9	0.6	0.6
<b>Ընդամենը ամբողջական եկամուտ</b>	<b>29 576</b>	<b>30 541</b>	<b>45 530</b>	<b>52 624</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>

Աղբյուրը. *SSY ԱՀ 2008-2009, 2013-2014թթ.*

Ինչպես վկայում են Աղյուսակ 6.1-ի տվյալները, 2008-2014թթ.-ի ընթացքում դրամական եկամուտների մասնաբաժինն աճել է, իսկ ոչ դրամական եկամուտներինը իջել է ամբողջական եկամուտների կազմում: 2014թ.-ին, համաձայն 2013թ. դեկտեմբերի 12-ին ընդունված Հայաստանի Հանրապետության օրենքի, բարձրացվել է պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրությունը: Դիտարկելով տնային տնտեսությունների եկամուտների աղբյուրներն ըստ բնակավայրերի՝ ակնհայտ է դառնում, որ վարձու աշխատանքից ստացված եկամուտների կարևորությունը մեծ է հատկապես քաղաքաբնակների համար, որտեղ այն 2014թ.-ին կազմել է ամբողջական եկամուտների 55.0% (Աղյուսակ 6.2): Քաղաքային բնակավայրերում 2008-2014թթ.-ի ժամանակահատվածում աճել է ինքնազբաղվածությունից ստացվող եկամուտների մասնաբաժինը: Մյուս կողմից՝ գյուղաբնակ տնային տնտեսություններում վարձու աշխատանքից ստացվող եկամուտների մասնաբաժինը 1.8 անգամ ցածր է քաղաքայինից և կազմել է ամբողջական եկամուտների 32.4%: 2014թ.-ին 2008թ.-ի համեմատ նվազել է գյուղաբնակների եկամուտների մասնաբաժինը գյուղմթերքի և կենդանիների վաճառքից (17.6%-ից՝ 14.8%): Գյուղաբնակ տնային տնտեսությունների համար

ոչ դրամական եկամուտների մասնաբաժինը անհամեմատ բարձր է քաղաքաբնակների համեմատ, հատկապես սեփական տնտեսությունից ստացված սննդամթերքի տեսքով: Ոչ դրամական եկամուտների մասնաբաժինը 2014թ.-ին կազմել է գյուղաբնակ տնային տնտեսությունների եկամուտների 14.2%, երբ քաղաքաբնակների համար այն կազմել է միայն 2.1%: Հարկ է նշել նաև, որ, ինչպես քաղաքաբնակ, այնպես էլ գյուղաբնակ տնային տնտեսությունների համար ավելացել է մասնավոր տրանսֆերտների մասնաբաժինը (քաղաքաբնակներինը՝ 2008թ.-ի 9.9%-ից 2014թ.-ին կազմելով 12.4%, իսկ գյուղաբնակներինը՝ 2008թ.-ի 7.3%-ից 2014թ.-ին կազմելով 9.8%):

**Աղյուսակ 6.2. Հայաստան. Տնային տնտեսությունների անվանական եկամուտների աղբյուրներն ըստ բնակավայրի տեսակի, 2008 և 2014թթ., (մեկ շնչի հաշվով միջին ամսական)**

	Քաղաքային բնակավայր				Գյուղական բնակավայր			
	դրամ		%		Դրամ		%	
	2008թ.	2014թ.	2008թ.	2014թ.	2008թ.	2014թ.	2008թ.	2014թ.
<b>1. Դրամական եկամուտներ</b>	<b>30 174</b>	<b>55 719</b>	<b>96.8</b>	<b>97.9</b>	<b>20 754</b>	<b>38726</b>	<b>78.0</b>	<b>85.8</b>
այդ թվում՝	18 068	31 303	57.9	55.0	7 881	14 617	29.6	32.4
• վարձու աշխատանք								
• ինքնագրավածություն	3 084	6 087	9.9	10.7	1 092	2 745	4.1	6.1
• գյուղմթերքի և կենդանիների վաճառք	201	340	0.6	0.6	4 670	6 682	17.6	14.8
• սեփականություն (վարձակալության վճարներ, տոկոսավճարներ, շահաբաժիններ)	49	276	0.2	0.5	10	52	0.0	0.1
• պետական թոշակներ և նպաստներ	5 006	8 878	16.1	15.6	4 615	7 311	17.3	16.2
• տրանսֆերտներ	3 094	7 091	9.9	12.4	1 950	4 441	7.3	9.8
դրանցից՝	587	977	1.9	1.7	195	122	0.7	0.3
- Հայաստանում ապրող բարեկամներից								
- Հայաստանից դուրս ապրող	2 507	6 100	8.0	10.7	1 755	4 319	6.6	9.6
• այլ եկամուտներ	672	1 744	2.2	3.0	536	2 878	2.1	6.4
<b>2. Ոչ դրամական եկամուտներ</b>	<b>1 010</b>	<b>1 198</b>	<b>3.2</b>	<b>2.1</b>	<b>5852</b>	<b>6 393</b>	<b>22.0</b>	<b>14.2</b>
այդ թվում՝	686	873	2.2	1.5	5 642	6 181	21.2	13.7
• սննդամթերքի սպառում սեփական տնտեսությունից								
• անվճար ոչ պարենային ապրանքներ և ծառայություններ	324	325	1.0	0.6	210	211	0.8	0.5
<b>Ընդամենը ամբողջական եկամուտ</b>	<b>31 184</b>	<b>56 917</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>26 606</b>	<b>45 119</b>	<b>100</b>	<b>100</b>

Աղբյուրը. *SSYU2 2008 և 2014թթ.*

Աղյուսակ 6.3-ում բերված է դրամական եկամուտների կառուցվածքն՝ ըստ դրամական եկամուտների դեցիլային խմբերի: Տնային տնտեսությունների դրամական եկամուտների ուսումնասիրությունը ցույց է տալիս եկամտի աղբյուրների բաշխվածությունն ու դրանց շարժը: 2004-2014թթ.-ի ընթացքում նվազել է աշխատանքից ստացված եկամուտների տարբերությունը տասներորդ և առաջին դեցիլային խմբերում (2004թ.-ի 98 անգամից, 2014թ.-

ին կազմելով 59 անգամ): Գյուղմթերքի վաճառքից ստացված եկամուտների տարբերությունը տասներորդ և առաջին դեցիլային խմբերում 2004թ.-ի 7.7 անգամից աճել է՝ 2014թ.-ին կազմելով 10.4 անգամ: Տրանսֆերտներից ստացված եկամուտների տարբերությունը տասներորդ և առաջին դեցիլային խմբերում նույնպես աճել է՝ 2004թ.-ի 57 անգամից 2014թ.-ին կազմելով 69 անգամ (Աղյուսակ 6.3 և Գծապատկեր 6.1):

**Աղյուսակ 6.3. Հայաստան. Դրամական անվանական եկամուտների շարժընթացն ըստ տնային տնտեսությունների դրամական եկամուտների դեցիլային խմբերի 2004, 2008-2014թթ.ին\***

*(մեկ շնչի հաշվով միջին ամսական, դրամով)*

2004թ.	Դեցիլային խմբեր ըստ դրամական եկամուտների									
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X
<b>Դրամական եկամուտները</b>	<b>2 260</b>	<b>4 395</b>	<b>6 189</b>	<b>8 017</b>	<b>9 869</b>	<b>11 903</b>	<b>14 337</b>	<b>17 882</b>	<b>23 793</b>	<b>47 061</b>
այդ թվում՝ եկամուտներ աշխատանքից	294	959	2 029	3 384	4 929	6 323	8 105	11 498	15 944	28 881
թոշակներ, նպաստներ, կրթաթոշակներ	1 032	1 872	2 175	2 094	2 357	2 315	2 190	2 059	1 921	1 771
եկամուտներ գյուղմթերքի վաճառքից	495	810	909	1 282	1 213	1 683	1 775	1 867	2 311	3 823
տրանսֆերտներ	157	188	444	592	728	1 000	1 582	1 857	2 840	8 933
որից՝ - Հայաստանում ապրող բարեկամներից	73	90	160	214	169	344	353	318	567	1 602
- Հայաստանից դուրս ապրող բարեկամներից	84	98	284	378	559	656	1 229	1 539	2 273	7 331
այլ եկամուտներ	282	566	632	665	642	582	685	601	777	3 653

2008թ.	Դեցիլային խմբեր ըստ դրամական եկամուտների									
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X
<b>Դրամական եկամուտները</b>	<b>5 236</b>	<b>10 012</b>	<b>13 483</b>	<b>16 754</b>	<b>20 150</b>	<b>23 936</b>	<b>28 035</b>	<b>33 561</b>	<b>42 934</b>	<b>76 398</b>
այդ թվում՝ եկամուտներ աշխատանքից	682	3 085	6 298	8 442	10 553	13 783	18 467	22 034	31 085	55 560
թոշակներ, նպաստներ, կրթաթոշակներ	2 550	4 099	4 334	4 412	4 951	5 620	5 356	6 684	4 656	6 259
եկամուտներ գյուղմթերքի վաճառքից	787	1 663	1 631	1 959	2 093	1 597	1 412	1 491	1 706	3 474
տրանսֆերտներ	549	617	790	1 368	2 020	2 138	2 355	2 884	4 765	9 662
որից՝ - Հայաստանում ապրող բարեկամներից	165	135	141	197	319	504	390	463	752	1 464
- Հայաստանից դուրս ապրող բարեկամներից	384	482	649	1 171	1 701	1 634	1 965	2 421	4 013	8 198
այլ եկամուտներ	668	548	431	572	533	797	445	468	722	1 443

2009թ.	Դեցիլային խմբեր ըստ դրամական եկամուտների									
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X
<b>Դրամական եկամուտները</b>	<b>5 273</b>	<b>9 877</b>	<b>13 731</b>	<b>17 660</b>	<b>21 416</b>	<b>25 337</b>	<b>30 058</b>	<b>36 482</b>	<b>45 723</b>	<b>76 508</b>
այդ թվում՝ եկամուտներ աշխատանքից	448	2 465	5 724	9 460	11 741	14 966	19 002	22 770	30 766	52 328
թոշակներ, նպաստներ, կրթաթոշակներ	2 714	4 741	4 579	4 537	5 480	6 800	6 342	6 344	7 246	7 692

2009թ.	Դեցիլային խմբեր ըստ դրամական եկամուտների									
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X
եկամուտներ գյուղվթերքի վաճառքից	765	878	1 429	1 213	1 405	1 387	953	2 070	1 734	4 928
տրանսֆերտներ	315	489	1 051	1 133	1 775	1 442	2 927	3 614	4 518	9 584
որից` - Հայաստանում ապրող բարեկամներից	98	118	244	249	318	173	421	311	567	1 067
- Հայաստանից դուրս ապրող բարեկամներից	217	371	807	884	1 457	1 269	2 506	3 303	3 951	8 517
այլ եկամուտներ	1 031	1 304	948	1 317	1 015	742	834	1 684	1 459	1 976

2010թ.	Դեցիլային խմբեր ըստ դրամական եկամուտների									
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X
<b>Դրամական եկամուտները</b>	6 489	11 207	15 440	19 407	23 166	27 216	32 225	39 133	49 671	91 965
այդ թվում` եկամուտներ աշխատանքից	748	2 774	6 178	10 387	13 460	15 843	19 319	25 760	35 951	59 114
թոշակներ, նպաստներ, կրթաթոշակներ	3 380	4 979	5 281	5 181	5 264	6 830	7 617	7 104	6 250	7 090
եկամուտներ գյուղվթերքի վաճառքից	599	1 145	1 065	933	842	1 186	979	1 205	1 439	2 438
տրանսֆերտներ	390	714	1 087	1 465	2 346	2 080	3 026	3 998	5 221	18 963
որից` - Հայաստանում ապրող բարեկամներից	136	208	221	205	379	206	578	871	842	1 314
- Հայաստանից դուրս ապրող բարեկամներից	254	506	866	1 260	1 967	1 874	2 448	3 127	4 379	17 649
այլ եկամուտներ	1 372	1 595	1 828	1 441	1 254	1 276	1 284	1 066	810	4 360

2011թ.	Դեցիլային խմբեր ըստ դրամական եկամուտների									
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X
<b>Դրամական եկամուտները</b>	6 530	12 242	16 757	21 181	25 880	30 582	36 501	43 972	55 171	95 095
այդ թվում` եկամուտներ աշխատանքից	772	3 678	7 237	11 181	14 155	18 480	22 218	28 220	37 017	62 731
թոշակներ, նպաստներ, կրթաթոշակներ	3 143	5 104	5 307	5 954	6 861	7 965	7 452	8 148	6 882	8 575
եկամուտներ գյուղվթերքի վաճառքից	1 005	1 287	1 457	1 363	1 642	1 182	1 694	1 815	2 030	3 928
տրանսֆերտներ	311	570	1 185	1 543	2 123	2 044	3 960	4 437	7 541	17 770
որից` - Հայաստանում ապրող բարեկամներից	97	70	264	466	269	232	375	478	1 382	1 962
- Հայաստանից դուրս ապրող բարեկամներից	214	500	921	1 077	1 854	1 812	3 585	3 959	6 159	15 808
այլ եկամուտներ	1 299	1 603	1 571	1 140	1 099	911	1 177	1 352	1 701	2 091

2012թ.	Դեցիլային խմբեր ըստ դրամական եկամուտների									
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X
<b>Դրամական եկամուտները</b>	7 437	13 676	18 539	23 340	28 220	33 446	39 728	48 241	60 756	118 748
այդ թվում` եկամուտներ աշխատանքից	1 075	4 505	7 600	11 999	15 363	18 755	22 465	32 647	42 900	78 523
թոշակներ, նպաստներ, կրթաթոշակներ	1 083	1 466	1 925	2 335	1 905	1 723	1 661	1 506	1 686	7 053
եկամուտներ գյուղվթերքի վաճառքից	3 953	5 893	6 419	6 204	7 891	9 059	9 656	7 809	7 462	7 796

2012թ.	Դեցիլային խմբեր ըստ դրամական եկամուտների									
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X
տրանսֆերտներ	228	646	1 311	1 756	1 821	3 085	4 575	4 930	7 902	16 148
որից` - Հայաստանում ապրող բարեկամներից	58	92	161	177	200	459	584	819	901	1 485
- Հայաստանից դուրս ապրող բարեկամներից	170	554	1 150	1 579	1 621	2 626	3 991	4 111	7 001	14 663
այլ եկամուտներ	1 098	1 166	1 284	1 046	1 240	824	1 371	1 349	806	9 228

2013թ.	Դեցիլային խմբեր ըստ դրամական եկամուտների									
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X
<b>Դրամական եկամուտները</b>	<b>8 469</b>	<b>15 400</b>	<b>20 981</b>	<b>25 847</b>	<b>30 969</b>	<b>36 169</b>	<b>42 430</b>	<b>51 041</b>	<b>64 742</b>	<b>130 642</b>
այդ թվում` եկամուտներ աշխատանքից	1 190	6 088	9 455	13 152	16 782	20 914	26 026	32 819	43 957	84 238
թոշակներ, նպաստներ, կրթաթոշակներ	4 214	5 152	6 490	6 852	7 727	9 527	9 084	8 112	7 956	10 912
եկամուտներ գյուղմթերքի վաճառքից	1 031	1 339	2 443	2 225	2 409	1 703	1 534	2 333	2 336	7 208
տրանսֆերտներ	454	1 104	1 193	2 415	2 117	2 367	4 234	5 984	8 483	19 834
որից` - Հայաստանում ապրող բարեկամներից	99	192	78	545	247	425	580	613	884	1 980
- Հայաստանից դուրս ապրող բարեկամներից	355	912	1 115	1 870	1 870	1 942	3 654	5 371	7 599	17 854
այլ եկամուտներ	1 580	1 717	1 400	1 203	1 934	1 658	1 552	1 793	2 010	8 450


2014թ.	Դեցիլային խմբեր ըստ դրամական եկամուտների									
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X
<b>Դրամական եկամուտները</b>	<b>9382</b>	<b>17253</b>	<b>23343</b>	<b>29414</b>	<b>34774</b>	<b>41080</b>	<b>48243</b>	<b>58685</b>	<b>76763</b>	<b>156509</b>
այդ թվում` եկամուտներ աշխատանքից	1 810	6 058	10 126	15 455	18 873	22 398	30 304	36 719	51 889	107 455
թոշակներ, նպաստներ, կրթաթոշակներ	4 620	6 496	6 595	7 962	9 496	10 567	10 457	10 225	8 518	8 176
եկամուտներ գյուղմթերքի վաճառքից	927	1 523	2 519	1 928	1 535	1 624	1 339	1 609	3 817	9 652
տրանսֆերտներ	357	1 358	2 259	2 181	3 225	4 616	4 402	7 724	10 393	24 748
որից` - Հայաստանում ապրող բարեկամներից	47	131	156	398	470	616	790	640	1 278	2 137
- Հայաստանից դուրս ապրող բարեկամներից	310	1 213	2 103	1 782	2 738	3 977	3 593	7 084	9 099	22 611
այլ եկամուտներ	1 668	1 818	1 844	1 888	1 645	1 875	1 741	2 409	2 146	6 478

Աղբյուրը. *SS ԿԱՀ 2004, 2008-2014թթ.*

*\*) Բացառությամբ եկամուտը ցույց չտված տնային տնտեսությունների*

**Գծապատկեր 6.1. Հայաստան. Տասներորդ դեցիլային խմբի տնային տնտեսությունների դրամական եկամուտների հարաբերությունն առաջին դեցիլային խմբի տնային տնտեսությունների դրամական եկամուտներին՝ ըստ եկամուտների աղբյուրների 2004, 2008, 2012-2014թթ.-ին\***

*(մեկ շնչի հաշվով, միջին ամսական, անգամ)*



**Աղբյուրը.** SSՀԱՀ 2004, 2008, 2012-2014թթ.

\* Բացառությամբ եկամուտ ցույց չտված տնային տնտեսությունները:

Պետական տրանսֆերտները դրամական եկամտի հիմնական աղբյուր են հենց առաջին դեցիլային խմբի տնային տնտեսությունների համար (2014թ.՝ 49.2%), իսկ տասներորդ դեցիլային խմբում եկամտի այդ աղբյուրի մասնաբաժինը շատ փոքր է (5.2%) (Աղյուսակ 6.4 և Գծապատկեր 6.2): 2004-2014թթ.-ին պետական տրանսֆերտների մասնաբաժինն ավելացել է տնային տնտեսությունների բոլոր դեցիլային խմբերում, բացի երկրորդից և երրորդից:

Մասնավոր տրանսֆերտների մասնաբաժինն ամենաբարձրն է տասներորդ դեցիլի տնային տնտեսությունների դրամական եկամուտների կազմում (15.8%) և 2004թ.-ի (19.0%) համեմատ եկամտի այդ աղբյուրի տեսակարար կշիռը նվազել է: Եկամտի այդ աղբյուրի մասնաբաժինը 2014թ.-ին նվազել է 2004թ.-ի համեմատ նաև առաջին և յոթերորդ դեցիլային խմբերի տնային տնտեսությունների դրամական եկամուտների կազմում: Առաջին դեցիլային խմբի համար նշված մասնաբաժինն ամենացածրն է բոլոր խմբերից և մոտ 4 անգամ պակաս է տասներորդ դեցիլի տնային տնտեսությունների տեսակարար կշռից (3.8% և 15.8% համապատասխան):



Աղյուսակ 6.4. Հայաստան. Դրամական եկամուտների կառուցվածքն ըստ դրամական եկամուտների դեցիլային խմբերի 2004, 2008-2014թթ.-ին, (մեկ շնչի հաշվով միջին ամսական)

(տոկոսներով)


Դրամական եկամուտների դեցիլային խմբեր	Տարիներ	Դրամական եկամուտներ	այդ թվում՝						
			աշխատանքից	թոշակներ, նպաստներ, կրթաթոշակներ	եկամուտներ գյուղատնտեսությանից	տրանս-Ֆերտներ	որից՝		Այլ եկամուտներ
							Հայաստանում ապրող բարեկամներից	Հայաստանից դուրս ապրող բարեկամներից	
I	2004 թ.	100	13	45.7	21.9	6.9	3.2	3.7	12.5
	2008 թ.	100	13	48.7	15	10.5	3.1	7.3	12.8
	2009 թ.	100	8.5	51.5	14.5	6	1.9	4.1	19.6
	2010 թ.	100	11.5	52.2	9.2	6	2.1	3.9	21.1
	2011 թ.	100	11.8	48.1	15.4	4.8	1.5	3.3	19.9
	2012 թ.	100	14.5	53.2	14.6	3.1	0.8	2.3	14.6
	2013 թ.	100	14.0	49.7	12.2	5.4	1.2	4.2	18.7
	2014 թ.	100	19.3	49.2	9.9	3.8	0.5	3.3	17.8
II	2004 թ.	100	21.8	42.6	18.4	4.3	1.9	2.2	12.9
	2008 թ.	100	30.8	40.9	16.6	6.2	1.3	4.8	5.5
	2009 թ.	100	25	48	8.9	4.9	1.2	3.7	13.2
	2010 թ.	100	24.8	44.4	10.2	6.4	1.8	4.5	14.2
	2011 թ.	100	30	41.7	10.5	4.7	0.6	4.1	13.1
	2012 թ.	100	32.9	43.1	10.7	4.7	0.6	4.0	8.6
	2013 թ.	100	39.5	33.5	8.7	7.2	1.2	5.8	11.1
	2014 թ.	100	35.1	37.7	8.8	7.9	0.8	7.0	10.5
III	2004 թ.	100	32.8	35.1	14.7	7.2	2.5	4.6	10.2
	2008 թ.	100	46.7	32.1	12.1	5.9	1	4.8	3.2
	2009 թ.	100	41.7	33.3	10.4	7.7	1.8	5.9	6.9
	2010 թ.	100	40	34.2	6.9	7	1.4	5.6	11.8
	2011 թ.	100	43.2	31.7	8.7	7.0	1.5	5.5	9.4
	2012 թ.	100	41.0	34.6	10.4	7.1	0.9	6.2	6.9
	2013 թ.	100	45.1	30.9	11.6	5.7	0.4	5.3	6.7
	2014 թ.	100	43.4	28.2	10.8	9.7	0.7	9.0	7.9
IV	2004 թ.	100	42.2	26.1	16	7.4	2.4	4.7	8.3
	2008 թ.	100	50.4	26.3	11.7	8.2	1.2	7	3.4
	2009 թ.	100	53.6	25.7	6.9	6.4	1.4	5	7.5
	2010 թ.	100	53.5	26.7	4.8	7.5	1.1	6.5	7.4
	2011 թ.	100	52.8	28.1	6.4	7.3	2.1	5.2	5.4
	2012 թ.	100	51.4	26.6	10.0	7.5	0.8	6.8	4.5
	2013 թ.	100	50.9	26.5	8.6	9.3	2.1	7.2	4.7
	2014 թ.	100	52.5	27.1	6.6	7.4	1.4	6.1	6.4
V	2004 թ.	100	49.9	23.9	12.3	7.4	1.7	5.7	6.5
	2008 թ.	100	52.4	24.6	10.4	10	1.6	8.4	2.6
	2009 թ.	100	54.8	25.6	6.6	8.3	1.5	6.8	4.7
	2010 թ.	100	58.1	22.7	3.6	10.1	1.6	8.5	5.4
	2011 թ.	100	54.7	26.5	6.3	8.2	1.0	7.2	4.3
	2012 թ.	100	54.4	28.0	6.8	6.5	0.7	5.7	4.3
	2013 թ.	100	54.2	25.0	7.8	6.8	0.8	6.0	6.2
	2014 թ.	100	54.3	27.3	4.4	9.3	1.4	7.9	4.7

Դրամական եկամուտների դեցիլային խմբեր	Տարիներ	Դրամական եկամուտներ	այդ թվում՝						Այլ եկամուտներ
			աշխատանքից	թոշակներ, նպաստներ, կրթաթոշակներ	եկամուտներ գյուղատնտեսության վաճառքից	տրանս- Ֆերտներ	որից՝		
							Հայաստանում ապրող բարեկամներից	Հայաստանից դուրս ապրող բարեկամներից	
VI	2004 թ.	100	53.1	19.5	14.1	8.4	2.8	5.5	4.9
	2008 թ.	100	57.6	23.5	6.7	8.9	2.1	6.8	3.3
	2009 թ.	100	59.1	26.8	5.5	5.7	0.7	5	2.9
	2010 թ.	100	58.2	25.1	4.4	7.6	0.7	6.9	4.7
	2011 թ.	100	60.4	26	3.9	6.7	0.8	5.9	3
	2012 թ.	100	56.1	27.1	5.2	9.2	1.4	7.9	2.4
	2013 թ.	100	57.8	26.3	4.7	6.6	1.2	5.4	4.6
	2014 թ.	100	54.5	25.7	4.0	11.2	1.5	9.7	4.6
VII	2004 թ.	100	56.5	15.3	12.4	11	2.3	8.6	4.8
	2008 թ.	100	65.9	19.1	5	8.4	1.4	7	1.6
	2009 թ.	100	63.2	21.1	3.2	9.7	1.4	8.3	2.8
	2010 թ.	100	60	23.6	3	9.4	1.8	7.6	4
	2011 թ.	100	60.9	20.4	4.6	10.8	1	9.8	3.3
	2012 թ.	100	56.5	24.3	4.2	11.5	1.4	10.0	3.5
	2013 թ.	100	61.3	21.4	3.6	10.0	1.4	8.6	3.7
	2014 թ.	100	62.8	21.7	2.8	9.1	1.6	7.4	3.6
VIII	2004 թ.	100	64.3	11.5	10.4	10.4	1.8	8.6	3.4
	2008 թ.	100	65.7	19.9	4.4	8.6	1.4	7.2	1.4
	2009 թ.	100	62.4	17.4	5.7	9.9	0.9	9	4.6
	2010 թ.	100	65.8	18.2	3.1	10.2	2.2	8	2.7
	2011 թ.	100	64.2	18.5	4.1	10.1	1.1	9	3.1
	2012 թ.	100	67.7	16.2	3.1	10.2	1.7	8.5	2.8
	2013 թ.	100	64.3	15.9	4.6	11.7	1.2	10.5	3.5
	2014 թ.	100	62.6	17.4	2.7	13.2	1.1	12.1	4.1
IX	2004 թ.	100	67	8.1	9.7	11.9	2.3	9.6	3.3
	2008 թ.	100	72.4	10.8	4	11.1	1.8	9.3	1.7
	2009 թ.	100	67.3	15.8	3.8	9.9	1.2	8.6	3.2
	2010 թ.	100	72.4	12.6	2.9	10.5	1.7	8.8	1.6
	2011 թ.	100	67.1	12.5	3.7	13.7	2.5	11.2	3.0
	2012 թ.	100	70.6	12.3	2.8	13.0	1.5	11.5	1.3
	2013 թ.	100	67.9	12.3	3.6	13.1	1.4	11.7	3.1
	2014 թ.	100	67.6	11.1	5.0	13.5	1.7	11.9	2.8
X	2004 թ.	100	61.4	3.8	8.1	19	3.3	15.6	7.7
	2008 թ.	100	72.7	8.2	4.5	12.6	1.9	10.7	1.9
	2009 թ.	100	68.4	10.1	6.4	12.5	1.4	11.1	2.6
	2010 թ.	100	64.3	7.7	2.7	20.6	1.4	19.2	4.7
	2011 թ.	100	66	9	4.1	18.7	2.1	16.6	2.2
	2012 թ.	100	66.1	6.6	5.9	13.6	1.3	12.3	7.8
	2013 թ.	100	64.5	8.3	5.5	15.2	1.5	13.7	6.5
	2014 թ.	100	68.7	5.2	6.2	15.8	1.4	14.4	4.1

Աղբյուրը. SSԿԱՀ 2004-2014 թթ.

**Գծապատկեր 6.2. Հայաստան. Դրամական եկամուտների կառուցվածքն առաջին և տասներորդ դեցիլային խմբերի տնային տնտեսությունների շրջանում, 2004 և 2014թթ. (մեկ շնչի հաշվով միջին ամսական)**

*(տոկոսներով)*



Աղբյուրը. SSYULՀ 2004 և 2014թթ.

**6.2 Տնային տնտեսությունների ծախսերը**

Տնային տնտեսությունների նյութական վիճակը բնութագրող հաջորդ ցուցանիշը տնային տնտեսության ամբողջական սպառողական ծախսերն են: Տնային տնտեսության ամբողջական սպառողական ծախսերի ներքո հասկացվում են դրամական և ոչ դրամական սպառողական ծախսերը:

Տնային տնտեսությունների ամբողջական սպառողական ծախսերը ներառում են տնային տնտեսությունների կողմից հաշվետու ժամանակահատվածում ձեռք բերված պարենային (ներառյալ տնից դուրս սպառված սննդամթերքի վրա կատարված ծախսերն ու տնային տնտեսության կողմից սպառվող (օգտագործվող) սեփական տնտեսությունից ստացված, ինչպես նաև բարեկամներից կամ այլ անձանցից անվճար ստացված սննդամթերքը՝ դրամով արտահայտված) և ոչ պարենային (ներառյալ երկարաժամկետ օգտագործման ապրանքների վրա կատարված ծախսերը) ապրանքների ու ծառայությունների դիմաց կատարված վճարումները, ինչպես նաև բարեկամներից կամ այլ անձանցից անվճար ստացված ոչ պարենային ապրանքները և ծառայությունները՝ դրամով արտահայտված:

Տնային տնտեսությունների սպառողական ծախսերը չեն ներառում հարկեր, դրամահավաքներ, պարտքերի մարում, ալիմենտների վճարում, բարեկամներին օգնություն, տուգանքներ, վարկերի մարում և այլ սպառման հետ չկապված ծախսեր, կուտակումներ, ինչպես նաև՝ տնային տնտեսությունների արտադրողական գործունեության հետ կապված ծախսեր (սերմերի, կենդանիների, հումքի ձեռքբերում):

Չնայած նրան, որ 2012թ.-ից տնային տնտեսությունների սպառողական ծախսերի մասով ՀՀ ԱՎԾ-ն անցել է «Հայաստանի Հանրապետության տնտեսական գործունեության

տեսակները» (NACE) դասակարգչից «Ըստ նպատակների անհատական սպառման դասակարգում» (COICOP) դասակարգչին, այս գլխում բերված սպառողական ծախսերի մասին տվյալները ներկայացված են ըստ NACE և COICOP դասակարգիչների: Տնային տնտեսությունների սպառողական ծախսերը 6.2.1 ենթաբաժնում բերվում են ըստ NACE դասակարգչի (ժամանակագրական շարքերի ապահովման նպատակով), իսկ 6.2.2-ում՝ ըստ COICOP դասակարգչի:

**6.2.1. Տնային տնտեսությունների սպառողական ծախսերն ըստ NACE դասակարգչի**

Տնային տնտեսությունների սպառողական ծախսերն ըստ NACE դասակարգչի ներառում են.

**Պարենային ապրանքներ**

- միս և մսամթերք
- կաթ և կաթնամթերք
- ձու
- ձուկ և ձկնամթերք
- շաքար և հրուշակեղեն
- կարագ և բուսական յուղեր
- կարտոֆիլ
- բանջարաբոստանային մշակաբույսեր
- մրգեր, հատապտուղներ, ընկուզագգիներ և խաղող
- հաց և հացամթերք
- այլ մթերք
- սնունդ տնից դուրս

**Ալկոհոլային խմիչք**

**Ծխախոտ**

**Ոչ պարենային ապրանքներ**

- հագուստ, կտորեղեն, կոշիկ
- կահույք, գորգեր, կենցաղային նշանակության ապրանքներ
- հիգիենայի պարագաներ և դեղամիջոցներ
- տրանսպորտային միջոցներ, դրանց պահեստամասեր և վառելիք
  - այլ ոչ պարենային ապրանքներ


**Ծառայություններ**

- բնակ-կոմունալ, կենցաղային (առանց հեռախոսի)
- մշակութային, հանգստի և սպորտի
- կրթության, ուսուցման և նախադպրոցական դաստիարակության
- բժշկական և առողջարանային
- տրանսպորտի և կապի
  - այլ

Տնային տնտեսությունների սպառողական ծախսերի կառուցվածքը 2014թ.-ին ներկայացված է Գծապատկեր 6.3-ում: Համաձայն ստացված տվյալների, բնակչության սպառողական ծախսերի գրեթե կեսը կազմում են սննդի վրա կատարված ծախսերը՝ 45.7%: 2004թ.-ի համեմատ (56.1%), այդ ծախսերի մասնաբաժինն ընդհանուր սպառողական ծախսերի մեջ նվազել է (Աղյուսակ 6.5):

**Գծապատկեր 6.3. Հայաստան. Տնային տնտեսությունների սպառողական ծախսերի կառուցվածքը 2014թ.-ին, տնային տնտեսության մեկ շնչի հաշվով միջին ամսական**

(տոկոսներով)



Աղբյուրը. SSՀԱՀ 2014թ.

Տնային տնտեսությունների սպառողական ծախսերի կառուցվածքի փոփոխությունն ըստ 2004, 2008, 2012-2014թթ.-ի հետազոտության արդյունքների բերված է ստորև.

**Աղյուսակ 6.5. Հայաստան. Տնային տնտեսությունների անվանական սպառողական ծախսերի կառուցվածքը, 2004, 2008, 2012-2014թթ.**

Ծախսերի հոդվածները	Տնային տնտեսության մեկ շնչի հաշվով միջին ամսական									
	Դրամ					%				
	2004թ.	2008թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2004թ.	2008թ.	2012թ.	2013թ.	2014թ.
<b>Սպառողական ծախսեր</b>	19 251	28 878	34 832	36 787	40770	100	100	100	100	100
այդ թվում՝										
<b>Մնունդ</b>	10 797	14 984	16 970	17 622	18 635	56.1	51.9	48.7	47.9	45.7
որից՝										0
Մնունդ տնից դուրս	227	449	439	612	602	1.2	1.6	1.3	1.7	1.5
<b>Ալկոհոլային խմիչքի գնում</b>	163	227	242	235	244	0.8	0.8	0.7	0.6	0.6
<b>Ծխախոտի գնում</b>	808	1 019	1 199	1 289	1404	4.2	3.5	3.4	3.5	3.4
<b>Ոչ պարենային ապրանքներ</b>	2 787	4 730	6 159	6 568	7 442	14.5	16.4	17.7	17.9	18.3
<b>Ծառայություններ</b>	4 696	7 918	10 262	11 073	13 045	24.4	27.4	29.5	30.1	32.0
այդ թվում՝										0
առողջապահություն	1 500	1 035	876	1 407	1 035	7.8	3.6	2.5	3.8	2.5
կրթություն	708	1 221	440	511	214	3.7	4.2	1.3	1.4	0.5
բնակ-կոմունալ	1 146	2 635	4 305	4 501	5 518	6.0	9.1	12.4	12.2	13.5
տրանսպորտ	694	967	1 227	1 138	1 493	3.6	3.3	3.5	3.1	3.7
Կապ	291	1 404	2 009	2 068	2 342	1.5	4.9	5.8	5.6	5.7
մշակույթ	3	3	178	20	8	0.0	0.0	0.5	0.1	0.0
իրավաբանական ծառայություններ	3	16	184	525	1 072	0.0	0.1	0.5	1.4	2.6
այլ ծառայություններ	351	637	1 043	903	1363	1.8	2.2	3.0	2.5	3.3

Աղբյուրը. SSՀԱՀ 2004, 2008, 2012-2014թթ.

Սննդի համար կատարված ծախսերի մասնաբաժինը շարունակում է ավելի մեծ լինել գյուղական բնակավայրերի տնային տնտեսությունների ընդհանուր սպառողական ծախսերի կազմում: 2004թ.-ի համեմատ 2014թ.-ին գյուղաբնակ տնային տնտեսություններում սննդի ձեռք բերման համար կատարված ծախսերը՝ 62.5%-ից նվազել են մինչև 53.7%: Իսկ ծառայությունների համար կատարված ծախսերի մասնաբաժինը, հատկապես կապի համար վճարվող գումարների տոկոսը, այլ կոմունալ ծառայությունների համեմատ շեշտակիորեն բարձրացել է: Գյուղական բնակչության ոչ պարենային ապրանքների ձեռք բերման վրա կատարված ծախսերի մասնաբաժինը սպառողական ծախսերում 2014թ.-ին գերազանցել է քաղաքային բնակչության կատարած ծախսերին (համապատասխանաբար՝ 19.7 և 17.6 %): Բնակ-կոմունալ ծախսերի մասնաբաժինն ընդհանուր ծախսերի կազմում քաղաքային բնակչության շրջանում ավելի է, քան գյուղաբնակ տնային տնտեսությունների շրջանում (Աղյուսակ 6.6, Գծապատկեր 6.4):


**Աղյուսակ 6.6. Հայաստան. Տնային տնտեսությունների անվանական սպառողական ծախսերի կառուցվածքն ըստ բնակավայրի տեսակի, 2004 և 2014թթ. (մեկ շնչի հաշվով միջին ամսական)**

Ծախսերի հոդվածները	Քաղաքային բնակավայր				Գյուղական բնակավայր			
	դրամ		%		դրամ		%	
	2004թ.	2014թ.	2004թ.	2014թ.	2004թ.	2014թ.	2004թ.	2014թ.
<b>Սպառողական ծախսեր</b>	<b>20 933</b>	<b>44708</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>16 458</b>	<b>33885</b>	<b>100</b>	<b>100</b>
այդ թվում՝								
<b>Մնունդ</b>	11 109	18 891	53.1	42.3	10 281	18 188	62.5	53.7
Որից՝ սնունդ տնից դուրս	321	870	1.5	1.9	72	133	0.4	0.4
<b>ալկոհոլային խմիչքի գնում</b>	173	237	0.8	0.5	146	254	0.9	0.7
<b>ծխախոտի գնում</b>	894	1 470	4.3	3.3	666	1 290	4.0	3.8
<b>ոչ պարենային ապրանքներ</b>	2 841	7 877	13.6	17.6	2 695	6 681	16.4	19.7
<b>ծառայություններ</b>	5 916	16 233	28.2	36.3	2 670	7 472	16.2	22.1
այդ թվում՝								
առողջապահություն	1 794	1 357	8.6	3.0	1 012	473	6.1	1.4
կրթություն	976	303	4.7	0.7	265	58	1.6	0.2
բնակ-կոմունալ	1 382	6 609	6.6	14.8	755	3 610	4.6	10.7
տրանսպորտ	929	1 935	4.4	4.3	303	720	1.8	2.1
կապ	421	2 625	2.0	5.9	75	1 847	0.5	5.5
մշակույթ	4	12	0.0	0.0	0	0	0	0.0
իրավաբանական ծառայություններ	4	1 516	0.0	3.4	0	295	0.0	0.9
այլ ծառայություններ	406	1 876	1.9	4.2	260	467	1.6	1.4

Աղբյուրը. *SSYUՀ 2004 և 2014թթ.*

**Գծապատկեր 6.4. Հայաստան. Տնային տնտեսությունների անվանական սպառողական ծախսերի կառուցվածքը 2004 և 2014թթ.-ին՝ ըստ բնակավայրի տեսակի (մեկ շնչի հաշվով, միջին ամսական)**

(տոկոսներով)



Աղբյուրը. SS4UL2 2004 և 2014թթ.

2008-2014թթ.-ի համար տնային տնտեսությունների սպառողական ծախսերը, ըստ բնակավայրի տեսակի և առավել մանրամասն բաշխվածության, բերված են Հավելված 3-ի Աղյուսակ A6.1-ում:

**6.2.2. Տնային տնտեսությունների սպառողական ծախսերն ըստ COICOP դասակարգչի**

Տնային տնտեսությունների սպառողական ծախսերն ըստ COICOP դասակարգչի ներառում են.

1. Մննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչքներ,
2. Ալկոհոլային խմիչքներ և ծխախոտ,
3. Հագուստ և կոշիկ,
4. Բնակարանային ծառայություններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ ,
5. Տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանի ընթացիկ սպասարկում,
6. Առողջապահություն,
7. Տրանսպորտ,
8. Կապ,
9. Հանգիստ և մշակույթ,
10. Կրթություն,
11. Հյուրանոցներ, սրճարաններ և ռեստորաններ,
12. Տարբեր ապրանքներ և ծառայություններ

**Աղյուսակ 6.7. Հայաստան. Տնային տնտեսությունների անվանական սպառողական ծախսերի կառուցվածքը, մեկ շնչի հաշվով միջին ամսական, ըստ նպատակների խմբավորված<sup>1)</sup>, 2013-2014թթ.**

*դրամ*

Ծախսերի հոդվածները	Ընդամենը հանրապետություն		այդ թվում՝			
			քաղաքային բնակավայր		գյուղական բնակավայր	
	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.
<b>Սպառողական ծախսեր</b>	<b>36 787</b>	<b>40 770</b>	<b>38 541</b>	<b>44708</b>	<b>33 747</b>	<b>33885</b>
այդ թվում՝						
աննդամթերք և ոչ ակոհոլային խմիչքներ	17 010	18 034	16 593	18 021	17732	18 055
ակոհոլային խմիչքներ և ծխախոտ	1 524	1 648	1 505	1 707	1556	1 544
հագուստ և կոշիկ	1 650	1 883	1 404	1 885	2 076	1 877
բնակ-կոմունալ ծառայություններ և վառելիք	4 646	5 683	5 290	6 731	3 530	3 853
տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանի ընթացիկ սպասարկում	1 283	1 225	1 131	1 199	1 547	1 271
առողջապահություն	2 876	2 666	3 571	3 355	1 668	1 461
տրանսպորտ	2 159	2 667	2 471	3 115	1 619	1 883
կապ	2 074	2 319	2 357	2 582	1 585	1 859
հանգիստ և մշակույթ	244	869	293	1 260	159	186
կրթություն	511	214	597	303	361	58
հյուրանոցներ, սրճարաններ և ռեստորաններ	807	637	1 152	925	208	133
այլ ծառայություններ	2 003	2 925	2 177	3 625	1 706	1 705

Աղբյուրը. *SSYULZ 2013 և 2014թթ.*

<sup>1)</sup>Համաձայն ըստ նպատակների անհատական սպառման ազգային դասակարգչի, հարմոնիզացված Եվրամիության «Ըստ նպատակների անհատական սպառման դասակարգչում» (COICOP-HBS) հետ:

**Աղյուսակ 6.8. Հայաստան. Տնային տնտեսությունների անվանական սպառողական ծախսերի կառուցվածքը, մեկ շնչի հաշվով միջին ամսական, տոկոսներով, ըստ նպատակների խմբավորված<sup>1)</sup>, 2013-2014թթ.**

*(տոկոսներով)*

Ծախսերի հոդվածները	Ընդամենը հանրապետությունում		Այդ թվում՝			
			քաղաքային բնակավայր		գյուղական բնակավայր	
	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.
<b>Սպառողական ծախսեր</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>
այդ թվում՝						
պարենային ապրանքներ և ոչ ակոհոլային խմիչքներ	46.2	44.2	43.0	40.3	52.5	53.3
ակոհոլային խմիչքներ և ծխախոտ	4.1	4.1	3.9	3.8	4.6	4.6
հագուստ և կոշիկ	4.5	4.6	3.7	4.2	6.1	5.5
բնակ-կոմունալ ծառայություններ և ջեռուցում	12.6	14.0	13.7	15.0	10.5	11.4
տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանի ընթացիկ սպասարկում	3.5	3.0	2.9	2.7	4.6	3.8
առողջապահություն	7.8	6.5	9.3	7.5	4.9	4.3
տրանսպորտ	5.9	6.5	6.4	7.0	4.8	5.5
կապ	5.6	5.7	6.1	5.8	4.7	5.5
հանգիստ և մշակույթ	0.7	2.1	0.8	2.8	0.5	0.5
կրթություն	1.4	0.5	1.5	0.7	1.1	0.2



Ծախսերի հոդվածները	Ընդամենը հանրապե- տությունում		Այդ թվում՝			
			քաղաքային բնակավայր		գյուղական բնակավայր	
	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.
հյուրանոցներ, սրճարաններ և ռեստորաններ	2.2	1.6	3.0	2.1	0.6	0.4
այլ ծառայություններ	5.5	7.2	5.7	8.1	5.1	5.0

Աղբյուրը. SSԿԱՀ 2013 և 2014թթ.

<sup>1)</sup> Համաձայն «Ըստ նպատակների անհատական սպառման» ազգային դասակարգչի, հարմոնիզացված Եվրոմիության «Ըստ նպատակների անհատական սպառման դասակարգում» (COICOP-HBS) հետ:

### 6.3. Եկամուտների ու ծախսերի անհավասար բաշխվածության գնահատումը

Տնային տնտեսությունների ծախսերի ցուցանիշն առավել վստահելի ցուցանիշ է եկամուտների ցուցանիշների համեմատ, քանի որ եկամուտները հաճախ թաքցվում կամ ավելի պակաս են նշվում հարցվողների կողմից (եկամուտները չբացահայտելու հակվածության էֆեկտը):

Բնակչության եկամուտների կամ ծախսերի տարբերակման համար հաշվարկվում է «Բնեռային» քվինտիլների հարաբերության գործակիցը: Այն է՝ 20% առավել ապահովված բնակչության եկամուտների կամ ծախսերի մակարդակի հարաբերությունը 20% նվազագույն ապահովված բնակչության եկամուտների կամ ծախսերի մակարդակին: Համաձայն այդ գնահատականի՝ 2014թ.-ին 2004թ.-ի համեմատ նվազել է 20% ամենաապահով և 20% ամենաանապահով բնակչության դրամական եկամուտների հարաբերակցությունը՝ 10.6 անգամից հասնելով 8.8 անգամի, իսկ սպառողական ծախսերի մասով՝ 5.8 անգամից հասնելով 5.6 անգամի (Աղյուսակ 6.9): «Բնեռային» քվինտիլների հարաբերության գործակիցն, ըստ բնակչության սպառողական ծախսերի, 2014թ.-ին համընկել է 2007թ. գործակցին:

#### Աղյուսակ 6.9. Հայաստան. 20% ամենաապահով և 20% ամենաանապահով բնակչության եկամուտների և ծախսերի հարաբերակցությունը, 2004-2014թթ.

	<i>անգամ</i>										
	2004թ.	2005թ.	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.
Ըստ դրամական եկամուտների	10.6	9.5	7.6	8.0	7.8	8.0	8.0	8.0	8.5	8.2	8.8
Ըստ սպառողական ծախսերի	5.8	6.0	5.4	5.6	5.2	5.1	5.2	5.4	5.2	5.2	5.6

Աղբյուրը. SSԿԱՀ 2004-2014թթ.

#### Աղյուսակ 6.10. Հայաստան. 10% ամենաապահով և 10% ամենաանապահով բնակչության եկամուտների և ծախսերի հարաբերակցությունը, 2004-2014թթ.

	<i>անգամ</i>										
	2004թ.	2005թ.	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.
Ըստ դրամական եկամուտների	20.8	17.9	13.9	15.6	14.1	14.5	14.2	14.8	15.9	15.0	16.6
Ըստ սպառողական ծախսերի	9.5	10.0	8.7	8.9	8.0	7.9	8.1	8.5	8.2	8.2	9.1

Աղբյուրը. SSԿԱՀ 2004-2014թթ.

Բնակչության եկամուտների կամ ծախսերի «բևեռային» դեցիլների հարաբերության գործակիցը (այն է, 10% առավել ապահովված բնակչության եկամուտների կամ ծախսերի մակարդակի հարաբերությունը 10% նվազագույն ապահովված բնակչության եկամուտների կամ ծախսերի մակարդակին) ավելի ցայտուն է, քան քվինտիլային հարաբերության գործակիցը: 2014թ.-ին այդ հարաբերակցությունն, ըստ սպառողական ծախսերի, կազմել է 9.1 անգամ, իսկ ըստ բնակչության դրամական եկամուտների՝ 16.6 անգամ:

Բնակչության եկամուտների և ծախսերի բաշխման անհավասարության գնահատման հիմնական ցուցանիշի՝ Ջինիի գործակցի վերլուծությունը բերված է սույն զեկույցի երրորդ գլխում:

Տնային տնտեսությունների մեկ շնչի հաշվով միջին ամսական սպառողական ծախսերի կառուցվածքի փոփոխությունը 2004-2014թթ.-ին, ըստ դեցիլային խմբերի, բերված է Հավելված 3-ի Աղյուսակ A6.2 –ում:

Ինչպես և սպասվում էր, անապահով տնային տնտեսությունների սննդի համար կատարվող ծախսերի մասնաբաժինն ընդհանուր սպառողական ծախսերի կազմում ավելի մեծ է, քան միջին հանրապետականը: Դիտարկվող ժամանակահատվածում (2004-2014թթ.) մոտ կրկնակի ավելացել են առաջին դեցիլային խմբի տնային տնտեսությունների ծառայությունների վրա կատարված ծախսերը (Գծապատկեր 6.5, Աղյուսակ 6.11): Տասներորդ դեցիլի տնային տնտեսություններն առաջին դեցիլի տնային տնտեսությունների համեմատ ավելի շատ են օգտվել թե՛ ծառայություններից, և թե՛ ձեռք բերել ոչ պարենային ապրանքներ:

**Աղյուսակ 6.11. Հայաստան. Մսպառողական ծախսերի կառուցվածքն ըստ սպառողական ծախսերի դեցիլային խմբերի 2004, 2008-2014թթ.-ին, (մեկ շնչի հաշվով միջին ամսական)**

(տոկոսներով)

Դեցիլային խմբեր ըստ սպառողական ծախսերի	Տարիներ	Մսպառողական ծախսեր	այդ թվում՝				
			սննդամթերք*	պլոնողային խմբից	ծխախոտ	ոչ պարենային ապրանքներ	Ծառայություններ
I	2004 թ.	100	73.4	0.4	5.1	8.6	12.5
	2008 թ.	100	67.4	0.4	4.5	7.3	20.4
	2009 թ.	100	63.6	0.2	5.1	7.7	23.4
	2010 թ.	100	64.6	0.3	3.9	8.5	22.7
	2011 թ.	100	62.9	0.3	4.4	8.2	24.2
	2012 թ.	100	63.2	0.3	4.3	7.8	24.4
	2013 թ.	100	62.0	0.2	4.7	8.7	24.4
	2014թ.	100	60.0	0.2	3.4	10.5	25.9
II	2004 թ.	100	71.4	0.4	4.7	10.2	13.3
	2008 թ.	100	66.3	0.4	4.0	8.2	21.1
	2009 թ.	100	63.1	0.3	4.1	9.2	23.3
	2010 թ.	100	63.5	0.3	4.2	9.3	22.7
	2011 թ.	100	62.9	0.4	4.6	9.1	23.0
	2012 թ.	100	60.0	0.3	4.1	11.6	25.0
	2013 թ.	100	59.3	0.3	4.4	11.7	24.3
	2014թ.	100	57.4	0.3	4.5	13.1	24.7
III	2004 թ.	100	71.7	0.6	5.1	8.9	13.7
	2008 թ.	100	62.8	0.4	4.4	9.4	23.0
	2009 թ.	100	61.0	0.4	4.7	10.6	23.3
	2010 թ.	100	61.6	0.5	4.3	11.1	22.5
	2011 թ.	100	61.7	0.4	4.0	10.9	23.0
	2012 թ.	100	57.8	0.3	4.4	13.1	24.4
	2013 թ.	100	56.9	0.4	4.9	14.0	23.8
	2014թ.	100	57.4	0.4	3.6	13.8	24.8
IV	2004 թ.	100	69.5	0.4	5.3	10.7	14.1
	2008 թ.	100	60.4	0.6	4.1	11.1	23.8
	2009 թ.	100	59.6	0.5	4.7	11.7	23.5


Դեցիլային խմբեր ըստ սպառողական ծախսերի	Տարիներ	Սպառողական ծախսեր	աղ թվում՝				
			աննդամթերք*	ակոհոլային խմիչք	ծխախոտ	ոչ պարենային ապրանքներ	Ծառայություններ
	2010 թ.	100	60.7	0.6	4.1	11.5	23.1
	2011 թ.	100	60.6	0.3	4.5	11.8	22.8
	2012 թ.	100	56.4	0.3	3.9	14.0	25.4
	2013 թ.	100	57.4	0.3	4.4	14.5	23.4
	2014թ.	100	56.0	0.3	3.9	14.6	25.2
V	2004 թ.	100	66.6	0.6	5.2	11.5	16.1
	2008 թ.	100	57.5	0.6	4.7	12.2	25.0
	2009 թ.	100	58.2	0.6	5.0	12.1	24.1
	2010 թ.	100	59.2	0.6	4.1	12.0	24.1
	2011 թ.	100	58.6	0.4	4.3	12.0	24.7
	2012 թ.	100	54.6	0.4	4.1	15.1	25.8
	2013 թ.	100	54.7	0.4	4.1	16.9	23.9
	2014թ.	100	53.0	0.3	4.2	16.0	26.5
VI	2004 թ.	100	64.1	0.7	4.9	12.5	17.8
	2008 թ.	100	57.1	0.5	3.9	13.5	25.0
	2009 թ.	100	55.1	0.7	4.5	12.9	26.8
	2010 թ.	100	57.4	0.6	4.4	13.7	23.9
	2011 թ.	100	59.7	0.5	3.6	13.5	22.7
	2012 թ.	100	53.6	0.5	3.6	17.8	24.5
	2013 թ.	100	52.6	0.4	4.5	17.2	25.3
	2014թ.	100	51.9	0.5	4.0	17.6	26.0
VII	2004 թ.	100	61.7	0.8	4.5	13.9	19.1
	2008 թ.	100	55.3	0.6	3.5	16.0	24.6
	2009 թ.	100	54.7	0.9	3.8	15.3	25.3
	2010 թ.	100	55.3	0.7	4.3	14.6	25.1
	2011 թ.	100	58.1	0.8	4.1	13.8	23.2
	2012 թ.	100	53.0	0.6	3.3	17.0	26.1
	2013 թ.	100	51.2	0.4	4.4	17.2	26.8
	2014թ.	100	50.0	0.5	4.2	18.9	26.4
VIII	2004 թ.	100	59.3	0.9	4.8	13.7	21.3
	2008 թ.	100	52.5	0.9	3.9	16.6	26.1
	2009 թ.	100	51.5	0.9	3.9	17.0	26.7
	2010 թ.	100	54.8	0.9	3.7	15.8	24.8
	2011 թ.	100	56.3	0.7	3.6	15.1	24.3
	2012 թ.	100	51.0	0.8	3.9	17.3	27.0
	2013 թ.	100	50.6	0.8	3.3	18.3	27.0
	2014թ.	100	48.3	0.6	3.6	19.3	28.2
IX	2004 թ.	100	55.1	1.0	4.0	16.3	23.6
	2008 թ.	100	47.3	0.8	3.2	19.1	29.6
	2009 թ.	100	49.2	1.1	3.3	17.2	29.2
	2010 թ.	100	52.1	1.4	3.7	17.2	25.6
	2011 թ.	100	53.0	1.1	3.4	15.5	27.0
	2012 թ.	100	48.2	0.7	3.3	18.7	29.1
	2013 թ.	100	46.5	0.8	3.1	21.4	28.2
	2014թ.	100	45.9	0.7	3.1	20.0	30.3
X	2004 թ.	100	38.0	1.1	2.9	18.6	39.4
	2008 թ.	100	40.1	1.2	2.6	22.6	33.5
	2009 թ.	100	38.9	1.2	2.5	20.1	37.3
	2010 թ.	100	38.3	1.4	2.3	20.1	37.9
	2011 թ.	100	39.0	1.0	2.2	21.1	36.7
	2012 թ.	100	36.2	1.1	2.5	22.3	37.9
	2013 թ.	100	34.7	1.0	2.1	20.3	41.9
	2014թ.	100	30.7	0.9	2.5	20.6	45.3

Աղբյուրը.ՏՏԳԱՀ 2004,2008-2014թթ.

\*) ներառյալ սեփական արտադրության աննդամթերքի սպառման արժեքը

**Գծապատկեր 6.5. Հայաստան. Տնային տնտեսությունների սպառողական ծախսերի կառուցվածքն I-ին և X-րդ դեցիլային խմբերում 2004 և 2014թթ. (մեկ շնչի հաշվով, միջին ամսական)**

*(տոկոսներով)*



**Աղբյուրը.** SSYUL 2004 և 2014թթ.

\* ներառյալ սեփական արտադրության սննդամթերքի սպառման արժեքը

Երբ էներգակիրների վրա ծախսվող գումարները դիտարկվում են ըստ **սպառողական ծախսերի** դեցիլային խմբերի բաշխվածության, ապա պարզ երևում են սպառման մեջ առկա տարբերությունները: Այսպես, 2014թ.-ին գազի վրա I դեցիլային խումբը միջինում մեկ շնչի հաշվով ծախսել էր ամսական 905 դրամ, X դեցիլային խումբը՝ 4 913 դրամ, իսկ Էլեկտրա-էներգիայի վրա, համապատասխանաբար՝ 1 072 և 3 727 դրամ:

**6.4 Տնային տնտեսությունների սպառումը**

Տնային տնտեսությունների կենսամակարդակը բնութագրող ցուցանիշներից է սննդամթերքի սպառումը: Սպառված սննդամթերքին է վերաբերվում այն մթերքը, որը հաշվետու ժամանակահատվածում գնվել, ստացվել է սեփական տնտեսությունից կամ ստացվել՝ որպես նվիրատվություն:

Սննդամթերքի սպառումը ներկայացված է հետևյալ սննդախմբերի կտրվածքով՝


- հացամթերք
- կարտոֆիլ
- բանջարեղեն և բոստանային մշակաբույսեր
- մրգեր և հատապտուղներ, ներառյալ չորացված
- շաքարավազ
- միս և մսամթերք
- ձկնամթերք
- կաթ և մածուն
- ձու

- պանիր
- կարագ և յուղ
- բուսական և այլ յուղեր:

Երբ սննդամթերքի սպառումը դիտարկվում է ըստ **սպառողական ծախսերի** դեցիլային խմբերի բաշխվածության, ապա պարզ երևում են սպառման մեջ առկա տարբերությունները: Այսպես, 2014թ-ին մրգերի սպառումը մեկ ամսվա կտրվածքով մեկ շնչի հաշվով տասներորդ դեցիլում 4,8 անգամ գերազանցում է այդ սննդամթերքի սպառմանն առաջին դեցիլում, մսամթերքի սպառումը՝ 3.6 անգամ, կարագի սպառումը գերազանցում է 3 անգամ, ձվի սպառումը՝ 2 անգամ, բանջարեղենի և բոստանային մշակաբույսերի սպառումը՝ 1.8 անգամ, պանրի սպառումը՝ 1,7 անգամ, կաթի և մածուխի սպառումը՝ 1,5 անգամ(Գծապատկեր 6.6): Հարկ է նշել, որ 2014թ-ին 2004թ-ի համեմատ, առաջին և տասներորդ դեցիլային խմբերում դրական տեղաշարժ է դրսևորվել հետևյալ սննդախմբերի սպառման մեջ՝ բանջարեղեն և բոստանային մշակաբույսեր, միս և մսամթերք, պանիր, ձու և բուսական յուղ:

**Գծապատկեր 6.6. Հայաստան. Հիմնական սննդամթերքի միջին ամսական սպառումը 2014թ.-ին ըստ I և X դեցիլային խմբերի սպառողական ծախսերի**

(մեկ շնչի հաշվով միջին ամսական, կիլոգրամներով)



Աղբյուրը.ՏՏԿԱՀ 2014թ.

Աղյուսակ 6.12–ում բերված է հիմնական սննդամթերքի միջին ամսական սպառումն ըստ սպառողական ծախսերի դեցիլային խմբերի բաշխվածության 2004 և 2008-2014թթ.-ին (տնային տնտեսության մեկ անդամի հաշվով):

**Աղյուսակ 6.12. Հայաստան. Հիմնական սննդամթերքի սպառումն ըստ սպառողական ծախսերի դեցիլային խմբերի 2004, 2008-2014թթ.-ին**

(մեկ շնչի հաշվով միջին ամսական, կիլոգրամներով)

2004 թ.	Ընդամենը	Ըստ սպառողական ծախսերի դեցիլային խմբերի									
		I	II	III	IV	V	VI	VII	VII	IX	X
Հացամթերք	12.8	12.5	12.2	12.9	12.7	12.9	12.4	13.2	13.8	13.1	12.8
Կարտոֆիլ	4.0	3.91	3.73	3.93	3.86	4.10	3.94	4.27	4.38	4.30	4.32
Բանջարեղեն և բոստանային մշակաբույսեր	5.3	3.7	4.3	4.8	5.1	5.7	5.4	6.2	6.3	6.4	6.3
Մրգեր և հատապտուղներ, ներառյալ չորացված	2.7	1.6	1.7	2.0	2.4	2.6	2.8	3.2	3.4	3.8	4.2
Միս և մսամթերք	1.4	0.7	0.8	1.0	1.1	1.3	1.4	1.7	1.9	2.3	2.6
Կաթ և մածուն, լիտր	1.9	1.3	1.6	2.0	1.9	1.9	2.0	2.2	2.4	2.1	1.9
Պանիր	0.7	0.5	0.6	0.7	0.7	0.7	0.7	0.8	0.9	0.9	0.9
Կարագ և յուղ	0.2	0.4	0.5	0.5	0.6	0.6	0.6	0.7	0.7	0.8	0.7
Ձու, հատ	8.5	5.2	6.4	7.8	8.2	8.8	8.7	9.7	10.9	10.9	11.7
Ձկնամթերք	0.2	0.1	0.1	0.2	0.2	0.2	0.2	0.2	0.2	0.3	0.3
Շաքար	0.6	0.5	0.5	0.5	0.6	0.6	0.6	0.7	0.7	0.6	0.6
Բուսական յուղ և այլ յուղեր, լիտր	0.3	0.3	0.3	0.3	0.3	0.3	0.3	0.3	0.3	0.3	0.3

2008 թ.	Ընդամենը	Ըստ սպառողական ծախսերի դեցիլային խմբերի									
		I	II	III	IV	V	VI	VII	VII	IX	X
Հացամթերք	12.7	11.5	11.8	12.2	12.5	13.2	13.5	13.4	13.1	12.9	13.0
Կարտոֆիլ	3.9	3.3	3.5	3.6	3.8	4.0	3.9	4.1	4.2	4.2	4.2
Բանջարեղեն և բոստանային մշակաբույսեր	6.3	5.2	5.4	5.9	5.9	6.1	7.0	7.0	6.6	6.5	7.1
Մրգեր և հատապտուղներ, ներառյալ չորացված	3.9	2.0	2.5	2.7	3.4	3.8	4.8	4.8	4.9	5.0	5.1
Միս և մսամթերք	2	1	1.2	1.3	1.6	1.8	2.1	2.2	2.5	2.8	3.5
Կաթ և մածուն, լիտր	1.7	1.3	1.4	1.6	1.6	1.8	1.9	2.0	1.9	1.8	1.9
Պանիր	1.06	1.20	1.34	1.16	1.04	1.00	1.01	0.97	0.93	0.94	1.01
Կարագ և յուղ	0.4	0.2	0.3	0.3	0.3	0.4	0.4	0.4	0.5	0.5	0.5
Ձու, հատ	10.1	5.9	7.8	8.5	9.0	10.5	10.6	11.5	11.5	12.7	13.2
Ձկնամթերք	0.2	0.0	0.1	0.1	0.1	0.2	0.2	0.2	0.2	0.2	0.3
Շաքար	0.7	0.8	0.8	0.7	0.6	0.7	0.6	0.6	0.7	0.7	0.7
Բուսական յուղ և այլ յուղեր, լիտր	0.6	0.6	0.6	0.5	0.5	0.5	0.5	0.6	0.5	0.6	0.6

2009թ.	Ընդամենը	Ըստ սպառողական ծախսերի դեցիլային խմբերի									
		I	II	III	IV	V	VI	VII	VII	IX	X
Հացամթերք	12.3	11.9	12.0	12.2	12.0	12.1	12.0	12.4	12.4	12.8	12.6
Կարտոֆիլ	3.9	3.8	3.6	3.6	3.9	3.9	4.0	4.0	4.0	4.4	4.0
Բանջարեղեն և բոստանային մշակաբույսեր	6.1	4.3	4.8	5.2	5.9	6.4	6.1	6.6	6.9	7.0	7.4

2009թ.	Ընդամենը	Ըստ սպառողական ծախսերի դեցիլային խմբերի									
		I	II	III	IV	V	VI	VII	VII	IX	X
Մրգեր և հատապտուղներ, ներառյալ չորացված	4.5	2.5	2.8	3.7	3.8	4.3	4.4	5.2	5.7	5.9	6.9
Միս և մսամթերք	2.0	1.0	1.3	1.5	1.7	1.7	1.9	2.2	2.4	2.9	3.4
Կաթ և մածուն, լիտր	1.7	1.1	1.4	1.5	1.7	1.6	1.7	2.1	2.1	2.0	1.9
Պանիր	1.0	0.7	0.8	0.9	1.0	1.0	1.1	1.1	1.2	1.2	1.2
Կարագ և յուղ	0.4	0.2	0.2	0.3	0.3	0.3	0.4	0.4	0.4	0.5	0.5
Ձու, հատ	10.5	6.9	8.4	9.2	9.5	10.4	10.6	11.3	12.2	13.1	13.5
Ձկնամթերք	0.2	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.2	0.2	0.2	0.2	0.3
Շաքար	0.7	0.6	0.6	0.6	0.7	0.7	0.6	0.7	0.7	0.8	0.7
Բուսական յուղ և այլ յուղեր, լիտր	0.5	0.5	0.5	0.5	0.6	0.6	0.5	0.5	0.6	0.6	0.6

2010թ.	Ընդամենը	Ըստ սպառողական ծախսերի դեցիլային խմբերի									
		I	II	III	IV	V	VI	VII	VII	IX	X
Հացամթերք	11.9	11.5	11.3	11.5	11.8	11.7	12.5	11.7	12.2	12.4	12.2
Կարտոֆիլ	3.9	3.4	3.5	3.6	3.8	3.8	4.0	3.8	4.1	4.3	4.2
Բանջարեղեն և բոստանային մշակաբույսեր	5.7	3.8	4.7	5.0	5.4	5.9	6.1	6.0	6.6	6.7	7.0
Մրգեր և հատապտուղներ, ներառյալ չորացված	4.3	2.0	2.6	3.1	3.7	3.9	4.4	4.7	5.1	5.9	7.4
Միս և մսամթերք	1.8	0.7	1.0	1.2	1.4	1.6	1.8	2.0	2.2	2.6	3.1
Կաթ և մածուն, լիտր	1.7	1.3	1.3	1.4	1.7	1.7	1.7	1.7	1.9	1.9	2.0
Պանիր	0.8	0.6	0.7	0.7	0.8	0.8	0.8	0.8	0.9	0.9	1.0
Կարագ և յուղ	0.3	0.1	0.2	0.2	0.2	0.3	0.3	0.3	0.3	0.4	0.5
Ձու, հատ	11.1	7.2	9.1	9.9	10.9	11.2	12.0	11.6	12.6	12.9	13.2
Ձկնամթերք	0.1	0.0	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.2	0.2	0.3	0.3
Շաքար	0.6	0.5	0.5	0.5	0.6	0.6	0.6	0.6	0.7	0.7	0.7
Բուսական յուղ և այլ յուղեր, լիտր	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.6	0.5	0.6	0.6	0.6

2011թ.	Ընդամենը	Ըստ սպառողական ծախսերի դեցիլային խմբերի									
		I	II	III	IV	V	VI	VII	VII	IX	X
Հացամթերք	12.2	11.1	11.2	11.4	11.7	12.0	12.7	13.0	13.2	13.1	12.6
Կարտոֆիլ	3.6	2.8	3.1	3.2	3.4	3.4	3.9	4.0	4.0	4.2	4.3
Բանջարեղեն և բոստանային մշակաբույսեր	6.5	4.3	5.0	5.6	6.2	6.2	7.2	7.3	7.6	7.9	7.9
Մրգեր և հատապտուղներ, ներառյալ չորացված	4.0	1.9	2.5	2.8	3.4	3.5	4.1	4.7	5.1	5.5	6.8
Միս և մսամթերք	1.8	1.0	1.2	1.3	1.5	1.6	1.8	2.1	2.0	2.4	2.9
Կաթ և մածուն, լիտր	1.7	1.0	1.4	1.3	1.6	1.7	1.8	1.9	2.0	1.9	2.0
Պանիր	0.8	0.4	0.6	0.6	0.8	0.8	0.9	1.0	1.0	1.1	1.1
Կարագ և յուղ	0.2	0.1	0.1	0.1	0.2	0.2	0.3	0.3	0.3	0.3	0.4
Ձու, հատ	11.2	7.4	8.3	9.3	10.3	10.6	12.0	13.0	13.5	13.6	14.6
Ձկնամթերք	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.2	0.2	0.2	0.3
Շաքար	0.6	0.5	0.5	0.6	0.6	0.6	0.6	0.7	0.7	0.8	0.7
Բուսական յուղ և այլ յուղեր, լիտր	0.6	0.5	0.5	0.5	0.6	0.6	0.6	0.6	0.6	0.6	0.6

2012թ.	Ընդամենը	Ըստ սպառողական ծախսերի դեցիլային խմբերի									
		I	II	III	IV	V	VI	VII	VII	IX	X
Հացամթերք	12.2	10.6	10.7	10.8	11.4	11.8	12.3	12.9	13.1	13.7	14.5
Կարտոֆիլ	3.6	2.9	3.1	3.3	3.3	3.4	3.6	3.8	3.9	4.1	4.1
Բանջարեղեն և բոստանային մշակաբույսեր	6.6	4.3	5.2	5.6	6.4	6.3	6.9	7.9	7.3	7.9	8.7
Մրգեր և հատապտուղներ, ներառյալ չորացված	4.2	1.4	2.4	2.5	3.1	3.8	4.5	5.2	5.3	6.1	7.7
Միս և մսամթերք	1.9	1.0	1.3	1.3	1.5	1.7	1.9	2.2	2.4	2.6	3.3
Կաթ և մածուն, լիտր	1.5	1.0	1.1	1.2	1.4	1.5	1.6	1.7	1.8	2.0	2.0
Պանիր	0.9	0.6	0.7	0.7	0.8	0.9	0.9	0.9	1.0	1.0	1.1
Կարագ և յուղ	0.2	0.1	0.1	0.1	0.2	0.2	0.2	0.3	0.3	0.3	0.4
Ձու, հատ	10.8	7.1	8.1	9.2	10.2	10.5	11.3	11.7	12.8	13.0	14.5
Ձկնամթերք	0.2	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.2	0.2	0.2	0.2	0.3
Շաքար	0.6	0.6	0.5	0.5	0.5	0.5	0.6	0.6	0.6	0.6	0.7
Բուսական յուղ և այլ յուղեր, լիտր	0.4	0.3	0.3	0.3	0.4	0.4	0.4	0.4	0.4	0.4	0.4

2013թ.	Ընդամենը	Ըստ սպառողական ծախսերի դեցիլային խմբերի									
		I	II	III	IV	V	VI	VII	VII	IX	X
Հացամթերք	11.8	10.9	10.5	10.8	11.3	11.6	11.7	12.2	12.5	13.0	13.7
Կարտոֆիլ	3.5	3.0	3.2	3.3	3.6	3.6	3.5	3.6	3.8	3.9	4.1
Բանջարեղեն և բոստանային մշակաբույսեր	6.6	4.0	4.9	5.3	6.3	6.3	7.0	7.4	7.7	8.0	8.8
Մրգեր և հատապտուղներ, ներառյալ չորացված	3.9	1.2	2.0	2.5	2.8	3.5	3.9	4.9	5.2	5.9	6.9
Միս և մսամթերք	1.9	0.8	1.2	1.4	1.6	1.6	2.0	2.2	2.4	2.6	3.3
Կաթ և մածուն, լիտր	1.5	0.8	1.2	1.2	1.5	1.5	1.6	1.8	1.8	1.9	1.8
Պանիր	0.8	0.6	0.6	0.7	0.8	0.8	0.8	0.8	0.9	0.9	1.0
Կարագ և յուղ	0.3	0.1	0.2	0.2	0.2	0.2	0.3	0.3	0.3	0.3	0.4
Ձու, հատ	10.4	6.3	8.0	8.7	9.6	10.2	10.7	11.5	12.1	13.4	13.7
Ձկնամթերք	0.2	0.1	0.1	0.1	0.1	0.2	0.2	0.2	0.2	0.3	0.3
Շաքար	0.6	0.5	0.5	0.5	0.5	0.6	0.6	0.6	0.6	0.6	0.7
Բուսական յուղ և այլ յուղեր, լիտր	0.4	0.3	0.3	0.3	0.4	0.4	0.4	0.4	0.4	0.4	0.5

2014թ.	Ընդամենը	Ըստ սպառողական ծախսերի դեցիլային խմբերի									
		I	II	III	IV	V	VI	VII	VII	IX	X
Հացամթերք	11.3	9.8	10.5	10.6	11.2	11.3	11.4	11.8	12.1	12.1	12.3
Կարտոֆիլ	3.4	3.1	3.1	3.0	3.3	3.4	3.4	3.7	3.5	3.6	3.4
Բանջարեղեն և բոստանային մշակաբույսեր	6.4	4.3	4.8	5.7	6.0	6.4	6.7	7.3	8.0	4.5	7.7
Մրգեր և հատապտուղներ, ներառյալ չորացված	3.8	1.3	1.9	2.6	3.2	3.9	4.0	4.8	5.0	5.5	6.2
Միս և մսամթերք	1.9	0.9	1.2	1.5	1.8	1.8	2.0	2.1	2.3	2.6	3.2
Կաթ և մածուն, լիտր	1.7	1.3	1.6	1.4	1.7	1.8	1.7	1.6	1.9	1.8	2.0
Պանիր	0.8	0.6	0.7	0.7	0.8	0.8	0.8	0.9	0.9	0.9	1.0
Կարագ և յուղ	0.2	0,1	0,1	0,2	0,2	0,2	0,2	0,2	0,3	0,3	0,3
Ձու, հատ	10.9	6.1	8.6	9.6	11.0	11.0	11.6	12.3	12.4	13.2	13.1
Ձկնամթերք	0.2	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.2	0.2	0.2	0.3	0.3
Շաքար	0.5	0.4	0.4	0.4	0.5	0.5	0.6	0.6	0.6	0.6	0.6
Բուսական յուղ և այլ յուղեր, լիտր	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.6	0.6	0.6	0.6

Աղբյուրը.ՏՏԿԱՀ 2004,2008-2014թթ.



**Աղյուսակ 6.13. Հայաստան. Մպառված սննդամթերքի էներգետիկան (մեկ շնչի հաշվով, օրական), 2012-2014թթ.**

	Մեղիանան, կկալ			Միջինը, կկալ		
	2012թ.	2013թ.	2014թ.	2012թ.	2013թ.	2014թ.
<b>Հանրապետական միջինը</b>	<b>2 020</b>	<b>1 915</b>	<b>1 963</b>	<b>2 169</b>	<b>2 090</b>	<b>2 043</b>
<b>Քվինտիլային խմբեր</b>						
Քվինտիլ 1	1 472	1 416	1 444	1 420	1 386	1 399
Քվինտիլ 2	1 872	1 793	1 805	1 865	1 798	1 802
Քվինտիլ 3	2 232	2 151	2 100	2 229	2 153	2 101
Քվինտիլ 4	2 685	2 609	2 443	2 703	2 638	2 451
Քվինտիլ 5	3 555	3 515	3 072	3 780	3 791	3 196
<b>Բնակավայրի տեսակը</b>						
Քաղաք	1 982	1 883	1 929	2 142	2 066	2 012
Գյուղ	2 072	1 961	2 001	2 219	2 132	2 095

Աղբյուրը. *SSՀԱՀ 2012-2014թթ.*